ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3 հոդվածի 24-րդ կետը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. մայիսի 14-ի N408 որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետը, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N85-Ն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2014-2017թթ. քառամյա ծրագիրը, 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N432-Ն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2016 թվականի ծրագիրը, շահագրգիռ պետական կառավարման մարմինների համաձայնությունները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N85-Ն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2014-2017թթ. Քառամյա ծրագրով նախատեսված է Երևան քաղաքի վարչական շրջանների կամ առանձին տարածքների գոտիավորման նախագծերի մշակում: Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակումը նախատեսված է Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի «Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրի հաստատման մասին» N432-Ն որոշմամբ:

Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ընդհանուր տարածքը կազմում է 760,01 հա, բնակչությունը՝ 74,4 հազար մարդ:

Որոշման նախագծի նպատակն է հաստատել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը (այսուհետև՝ գոտիավորման նախագիծ), որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է և որով սահմանվում է նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածի 23-րդ կետի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի մշակված գոտիավորման նախագիծը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է ավագանին:

Գոտևորման նախագիծը Երևանի քաղաքապետարանի պատվերով մշակվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին՝ Երևան քաղաքի ավագանու 2016թ. հունիսի 24-ի N560-Ա որոշմամբ հաստատված Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքի հիման վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21. 06. 2014թ. ՀՕ-110-Ն/ 12-րդ, 13-րդ հոդվածների, 17-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշման հավելվածի 3-րդ գլխի 31-րդ մասով սահմանված կարգով գոտիավորման նախագծի վերաբերյալ տեղի է ունեցել 4 հանրային քննարկումներ:

Գոտևորման նախագիծը «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածի 25-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ստացել է քաղաքաշինական համալիր (ՊՓ-ՔՇ3-17 առ 05. 12. 2017թ.) և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննական (ՊԲՓ57 առ 18.06.2018թ.) դրական եզրակացություններ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ նախագծի վերաբերյալ առկա է ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ քաղաքաշինության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնում ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N1-85 առ 08.11.2019թ. դրական եզրակացությունը (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի N01/11. 2/6901-2019 առ 13.112019թ. գրություն):

Համաձայն ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի N408 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի գոտիավորման նախագիծը համաձայնեցված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, ՀՀ ջրային կոմիտեի և Հայաստանի շինարարների միության հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
<<ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ>> ՓԲԸ

ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

	

Երևան

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2020 թ. ..... -ի
N -Ա որոշման

ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքի

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պատվիրատու՝ **Երևանի քաղաքապետարան,**

Նախագծային կազմակերպություն՝ **«Երևաննախագիծ» ՓԲԸ,**

Պատվեր՝ **ՈԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/132**

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 85-Ն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2014-2017թթ. քառամյա ծրագրով նախատեսվել է Երևան քաղաքի վարչական շրջանների կամ առանձին տարածքների գոտիավորման նախագծերի մշակում: Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտևորման նախագիծը մշակվել է Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի «Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրի հաստատման մասին» N432-Ն որոշման հիման վրա՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից, համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի (ՈԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/13 առ 16.11.2016թ.):

Գոտիավորման նախագիծը մշակվել է Երևանի ավագանու 2016թ. հունիսի 24-ի N560-Ա որոշմամբ հաստատված քաղաքաշինական առաջադրանքի հիման վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն մշակվել է նաև նախագծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախագիծը /ՇՄԱԳ/:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. Հ0-110-Ն/ 12-րդ, 13-րդ հոդվածների, 17-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2015թ նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշման հավելվածի 3-րդ գլխի

31-րդ մասով սահմանված կարգով գոտևորման նախագծի վերաբերյալ տեղի է ունեցել 4 հանրային քննարկումներ:

Գոտիավորման նախագիծը «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածի 25-րդ կետի պահանջներին համապատասխան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է քաղաքաշինական համալիր (Փ-ՔՇ3-17 առ 05.10.2017թ.) և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննական (ՊԲՓ-57 առ 18.06.2018թ.) դրական եզրակացություններ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածի 8-րդ կետի համաձայն նախագծի վերաբերյալ առկա է քաղաքաշինության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնում ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի N1-85 առ 08.11.2019թ.):

Համաձայն ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ի N408 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի գոտևորման նախագիծը համաձայնեցված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, ՀՀ ջրային կոմիտեի և Հայաստանի շինարարների Միության հետ:

Տվյալ նախագիծը պետք է հանդիսանա որպես քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ և սրանով սահմանվում են փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Նախագծման համար ուղեցույց են ծառայել հետևյալ իրավական, նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.

- <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենք,

- ՀՀ հողային օրենսգիրք,
- ՀՀ անտառային օրենսգիրը,
- <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքը, (ընդունված է 2014թ-ի հունիսի 21-ին, ՀՕ-110-Ն),
- Կարգ <<ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման>>՝ հաստատված ՀՀ կառավարության 29.12.11 N 1920-Ն որոշմամբ,
- Կարգ <<Բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման>>՝ հաստատված 14.05.01 N 408 որոշմամբ,
- Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագիծ և այլ:

Նախագծում հաշվի են առնված նաև <<ՍԵՄԱԹ-ի Եվրոպական մայրցամաքի կայուն զարգացման հիմնադրային սկզբունքների>>, <<Օրհուսի կոնվենցիայի>>, <<Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի>>, <<Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի>> և այլ փաստաթղթերի միջոցառումներն ու սկզբունքները:

Գոտևորման նախագծում հաշվի են առնվել հաստատված և գործող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում, ինչպես նաև հողօգտագործման սխեմաներում ներառված դրույթները:

Նախագծի մշակման հիմնական նպատակը տարածքի հեռանկարային տնտեսական զարգացման և տարածքային աճի ուղղությունների, տարածքների գործառնական նշանակության որոշումն է՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական լայն համալիրի կիրառումով, տարածքների հողօգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով: Առաջարկվող գոտիներում սահմանվում են տարբեր ինտենսիվությամբ օգտագործվող հիմնական տարածքային միավորները, դրանց նախընտրելի հողօգտագործման ձևերը և կառուցապատման չափորոշիչները՝ կառուցապատողների կողմից փուլ առ փուլ կառուցապատման, տարածքի բազմաբնույթ օգտագործումը խրախուսելու, համաքաղաքային համալիրների ռացիոնալ տեղաբաշխումն ապահովելու, հատուկ նախագծվող համալիրները կազմավորվող քաղաքաշինական միջավայրում ներդաշնակորեն ինտեգրելու համար:

Նախագծի հայեցակարգային դրույթները

Նախագծի հայեցակարգային դրույթները և հիմնական ուղղությունները բխում են Երևանի հաստատված 2005-2020թթ. գլխավոր հատակագծի նախագծի հիմնական դրույթներից:

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագիծը մշակված է՝

- գոյություն ունեցող տարածքի սահմանների շրջանակում,
- տարածքային սկզբունքով, որի մեջ պարունակված է խնդիրների լուծման այլընտրականությունը՝ սեփականության բոլոր ձևերի նկատմամբ,
- տարածքի հողօգտագործման արդյունավետության բարձրացումը քաղաքի հատակագծային համակարգում,
- կայուն զարգացման սկզբունքներից ելնելով, պահպանելով սոցիալական, տնտեսական և էկոլոգիական ոլորտների պահանջների հավասարակշռությունը:

Նախագծի հիմնական խնդիրներն են ՝

- հատակագծային կառուցվածքի բարելավումը, տարածական ամբողջականության և գործառույթների ռացիոնալ բաշխման ապահովումը,
- բնակելի պայմանների բարելավումը, բնակելի ֆոնդի հուսալիության և անվտանգության բարձրացումը,
- բնակչության սպասարկման համակարգի բարելավումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանումը և պաշտպանությունը,
- բնության ամբողջականության վերականգնումը, էկոլոգիական ռիսկի նվազեցումը,
- տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների բարելավումը և դրանց շահագործման հուսալիության ու անվտանգության ապահովումը:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ընդհանուր տարածքը կազմում է 760,01 հա, բնակչության թվաքանակը՝ 74.4 մարդ:

Վարչական շրջանը սահմանակից է Արաբկիր, Կենտրոն, Նոր Նորք, Ավան վարչական շրջաններին: Տարածքը սահմանափակված է արևմուտքից Ազատության

և Թբիլիսյան պողոտաներով, հյուսիս-արևելքից՝ Ռուբինյանց փողոցով և երկաթգծով, հարավից՝ Մյասնիկյան, Սարալանջի փողոցով և Գետառի կիրճով, արևելյան սահմանը սահմանակից է Նոր-Նորքին: Նախկինում իրենից ներկայացրել է երկու առանձին թաղամաս՝ Քանաքեռ ու Զեյթուն, որոնք հետագայում միավորվելով կազմել են ներկայիս վարչական շրջանը:

Զեյթուն թաղամասի կառուցումը՝ Երևանից հյուսիս, Քանաքեռ ավանից ոչ հեռու, սկսվել է 1947 թվականի գարնանը: Թաղամասում բնակության համար 500-700 քառ. մետր հողատարածքներ են տրամադրվել հայրենադարձ 250 ընտանիքների:

Համայնքում գործում են պատմական նշանակության 3 թանգարան, 4 եկեղեցի, հանրապետական նշանակության 6 բժշկական կենտրոն, 2 պոլիկլինիկա, գիտահետազոտական 10 ինստիտուտ, 4 բարձրագույն ուսումնական և 41 նախադպրոցական ու հանրակրթական հաստատություններ, գործում են 14 արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկություններ, այստեղ է նաև Ռուսաստանի Դաշնության զորամիավորման և Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարության գլխավոր շտաբերը:

Քանաքեռ-Զեյթուն համայնքը որպես վարչատարածքային միավոր կազմավորվել է 1997-ին:

Նախագծի հայեցակարգային դրույթները և հիմնական ուղղությունները բխում են Երևանի հաստատված գլխավոր հատակագծի նախագծի հիմնական դրույթներից:

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագիծը մշակված է՝

- գոյություն ունեցող տարածքի սահմանների շրջանակում,
- տարածքային սկզբունքով, որի մեջ պարունակված է խնդիրների լուծման այլընտրականությունը՝ սեփականության բոլոր ձևերի նկատմամբ,
- տարածքի հողօգտագործման արդյունավետության բարձրացումը քաղաքի հատակագծային համակարգում,
- կայուն զարգացման սկզբունքներից ելնելով, պահպանելով սոցիալական, տնտեսական և էկոլոգիական ոլորտների պահանջների հաշվեկշիռը:

Նախագծի հիմնական խնդիրներն են՝

- հատակագծային կառուցվածքի բարելավումը, տարածական ամբողջականության և գործառույթների ռացիոնալ բաշխման ապահովումը,
- բնակելի պայմանների բարելավումը, բնակելի ֆոնդի հուսալիության և անվտանգության բարձրացումը,
- բնակչության սպասարկման համակարգի բարելավումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանումը,
- բնության ամբողջականության վերականգնումը, էկոլոգիական ռիսկի նվազեցումը,
- տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների բարելավումը և դրանց շահագործման հուսալիության ու անվտանգության ապահովումը:

Ելնելով դիտազննումներից և հողահատկացումների վերլուծությունից, և նպատակ ունենալով ապահովել տվյալ տարածքում գործառական նպատակահարմարություն, նախագծով առաջարկվել է.

- Բազմաբնակարան կառուցապատում նախատեսել Թբիլիսյան խճուղուն զուգահեռ հատվածում. Ներկայումս այդ գոտին իրենից ներկայացնում է առանձին կառուցապատված հատվածներ ինն հարկանի պանելային շենքերով. Գոտին պետք է իրականացվի որպես հնարավորինս ընդհանրացված և առանձին հատվածներում ընդհանուր ծավալահատակագծային հորինվածքով միավորված հանգույց:
- Առաջարկվում են համալիր վերակառուցման/իրացման գոտիներ՝ Թբիլիսյան խճուղուց դեպի աջ ընկած հատվածում՝ Զաքարիա Քանաքեռցու, Ֆանարջյան և Ծարավ Աղբյուր փողոցներով եզերված գոտում, նախատեսելով խառը կառուցապատում,
- Զաքարիա Քանաքեռցու փողոցից և Թբիլիսյան խճուղուց դեպի երկաթգիծ ընկած հատվածը՝ նախատեսել որպես իրացման գոտի՝ առաջարկելով որպես խառը կառուցապատման գոտի:
- <<Ալմաստ>> գործարանի դիմացի՝ դեպի Մյասնիկյան պողոտային հարող ձորը ընկած հատվածը առաջարկել որպես համալիր վերակառուցման գոտի՝ նախատեսելով այդտեղ խառը կառուցապատման գոտի:

- Մյասնիկյան պողոտային հարող տարածքը՝ կենդանաբանական այգու դիմացի հատվածում, նախատեսել որպես խառը կառուցապատման գոտի՝ կանաչ գոտիների գերակայմամբ:

Սույն նախագծով նախագծային տարածքը բաժանվել է թաղամասերի՝ հաշվարկների ներկայացման դյուրինացման համար:

Յուրաքանչյուր թաղամասի համար առանձնացվել են հիմնական գործառույթը և հողօգտագործման հիմնական տեսակները:

Առանցքային դրույթներ են դարձել.

- Գլխավոր հատակագծի հաստատումից մինչ օրս ընկած ժամանակահատվածում իրականացված հողահատկացումների և կառուցապատված տարածքների ենթակառուցվածքային կազմակերպումը,
- Բակային տարածքների բարեկարգումը ու դրանց վերակազմավորումը՝ բակային ստորգետյա տարածքների յուրացմամբ և այնտեղ ավտոկայանատեղերի կազմակերպմամբ,
- Մանկական խաղահրապարակների կազմակերպումը
- Հետիոտն անցուղիների կազմակերպումը
- Կանաչապատ հանրային տարածքների ավելացումը՝ (կանաչապատ առաջարկվող մակերեսները զբաղեցնում են գուցե կզբաղեցնեն՞ (եթե առաջարկվող են) մոտ 65.4 հա)
- Սպորտային հրապարակների նախատեսումը
- Ճանապահափոխոցային ցանցի կազմակերպումը և առանցքային հատվածների կարմիր գծերի սահմանումը:

Դիտարկվող շրջանի համար նորովի շեշտադրվում են հետևյալ հատվածները.

- Արտադրական գոտիների վերաբերյալ մասնակի գործառական փոխակերպումներ են նախատեսվում:
- Երևան քաղաքի մինչև 2020թ. Գլխավոր հատակագծով նախատեսված է կառուցել հասարակական զուգարաններ: Համաձայն վերոնշյալ նախագծի հասարակական զուգարաններ տեղաբաշխման ծրագրի և սխեմայի, Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանում ևս առաջարկվում է կառուցել հասարակական զուգարաններ: Սույն գոտևորման նախագծով դրանք առաջարկվում է

նախատեսել նոր խառը կառուցապատման գոտիներում և ստորգետյա հատվածներում:

Դիտարկվող տարածքի համար կազմվել է թույլատրելի հողօգտագործումների սահմանափակումների աղյուսակ, որի համար հիմք է հանդիսացել Երևանի գլխավոր հատակագծի նախագծում նախատեսվող և սույն գոտևորման նախագծում՝ ըստ <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում սահմանված պահանջների կատարված գոտևորումը:

Հիմնական գոտիներ, տարբերակող նշաններ և մակերեսներ

NN	*Գոտի*	*Տարբերա-կող նշաններ*	*Տարածք (հա)*
1.	ԲԱԶՄԱՀԱՐԿ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ	ԲԿ	91.0
2.	ՍԱԿԱՎԱՀԱՐԿ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ	ՍԿ	142.3
3.	ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ	ՎԿ	0.6
4.	ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /դպրոցներ և մանկապարտեզներ/	ՀՈՒԿ	17.4
5.	ԱՌԵՎՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՌՈՒՑՆԵՐԻ	ԱԿ	19.9
6.	ԲՈՒԺ-ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ	ԲԱ	20.4
7.	ՄԱՐԶԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ	ՄԳ	0.5
8.	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ /մասնագիտացված հատուկ, հատուկ և բարձրագույն ուսումնական հաստատություններ/	ՈՒԳ	9.4
9.	ՄՇԱԿՈՒԹԱ-ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ	ՄԼ	1.2
10.	ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ	ԽԿ	139.0
11.	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ	ՀԿ	69.0
12.	ԲՈՒՖԵՐԱՅԻՆ	ԲԳ	-

13.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՐԱՆՆԵՐԻ	ԱՐ	36.5
14.	ԳԻՏԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ	ԳԱ	18.1
15.	ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ	ԿԳ	6.4
16.	ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ	ՏՕ	3.7
17.	ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	ՊՄ	2.1
18.	ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ	ՀԳ	32.5
19.	ՋՐԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ	ՋԳ	0.4

Հիմնական և օժանդակ գոտիներն առանձնացվել են հաշվի առնելով հողամասերի նպատակային նշանակությունը, ինչպես նաև քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, ինժեներաերկրաբանական և այլ բնույթի սահմանափակումները, հողամասերի գործառնական նշանակությունը, առանձին հողատեսքերին և ընդունված թույլատրելի օգտագործումներին ներկայացվող ճարտարապետահատակագծային պահանջները:

Հիմնական դրույթներին կից ներկայացվում են Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտևորման նախագծի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների N1 աղյուսակը, ինչպես նաև նախագծի կազմում ընդգրկված հետևյալ ուրվագծերը՝

- Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ: Հենակետային հատակագիծ:
- Գոտիավորման նախագիծ: Հիմնական գծագիր:
- Գոտիավորման նախագիծ: Կառուցապատման էսքիզ:
- Տարածքի համալիր գնահատման նախագիծ: Հատակագծային սահմանափակումների ուրվագիծ:
- Կարմիր գծեր:
- Գոտիավորման նախագիծ: Կանաչապատման նախագիծ:
- Գոտիավորման նախագիծ: Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններ

Նախագծի ամբողջական կազմը ներկայացված է գոտևորման նախագծում:

Աղյուսակ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Երևանի Քանաքեռ—Զեյթուն վարչական շրջանի տարածքի զոտևորման նախագծի

	Ցուցանիշը	Չափի միավորը	Փաստացի	Առաջնահերթ	Հեռանկարային
	1	2	3	4	5
		1. Տարածքը			
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	760.01		760.01
	բնակավայրերի հողեր,	հա	608.9		633.9
	որից՝				
	բնակելի կառուցապատման	հա	305.8		233.3
	հասարակական կառուցապատման	հա	77.2		69.5
	խառը կառուցապատման	հա	58.3		139.0
	ընդհանուր օգտագործման,	հա	137.0		192.2
	որից՝				
	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա	38.1		69.0
	փողոցներ, հրապարակներ	հա	98.9		123.2
	այլ տարածքներ	հա	-		-
	այլ հողեր	հա	30.7		-
	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր,	հա	75.8		53.9
	որից՝				
	արդյունաբերական օբյեկտների	հա	75.8		53.9
	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	-		-
	Պահեստարանների	հա	-		-
	ընդերքի օգտագործման	հա	-		-
	էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր,	հա	38.6		35.6
	որից՝				
	Էներգետիկայի	հա	1.9		1.9

	Կապի	հա	0.5		0.5
	Տրանսպորտի	հա	6.7		3.7
	կոմունալ ենթակառուցվածքների	հա	29.5		29.5
	հատուկ պահպանվող տարածքների հողեր,	հա	3.8		3.8
	որից՝				
	Բնապահպանական	հա	-		-
	առողջարարական նպատակներով նախատեսված	հա	-		-
	հանգստի համար նախատեսված	հա	-		-
	պատմական և մշակութային	հա	3.8		3.8
	հատուկ նշանակության հողեր	հա	32.5		32.5
	գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	-		-
	որից՝				
	Վարելահող	հա	-		-
	բազմամյա տնկարկներ	հա	-		-
	Խոտհարքներ	հա	-		-
	Արոտավայրեր	հա	-		-
	այլ հողատեսքեր	հա	-		-
	անտառային հողեր	հա	-		-
	ջրային հողեր	հա	0.4		0.4
	Ջրամբարներ	հա	-		-
	Լճեր, գետեր	հա	-		-
	Ջրանցքներ	հա	-		-
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	0.4		0.4
	պահուստային հողեր	հա	-		-
	2. Տարածքն ըստ սեփականության ձևերի				
	պետական սեփականություն	հա			
	համայնքի սեփականություն	հա			
	ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն	հա			
	3. Դեմոգրաֆիական տվյալներ				
	բնակչության թիվը	հազ. մարդ	74.4		77.7

	բնակչության խտությունը (բնակավայրի մասով) բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝	մարդ/հա	204.3		208.7
	մինչև 17 տարեկան երեխաներ	հազ. մարդ/ տոկոս			
	աշխատունակ հասակի բնակչություն	հազ. մարդ/ տոկոս			
	թոշակառու բնակչություն և հաշմանդամներ	հազ. մարդ/ տոկոս			
	4. Բնակելի ֆոնդը				
	ընդհանուր բնակելի ֆոնդը	հազ. քառ. մ (ընդհանուր մակերես)	1296.2		1426.0
	ընդհանուր մակերես				
	որից՝				
	մենատներ	հատ	1263.0		890.0
	Բնակչության միջին ապահովվածությունը բնակելի ընդհանուր մակերեսով	քառ. մ/մարդ	17.4		18.4
	5. Բնակչության մշակութային և կենցաղային սպասարկման համակարգը				
	մանկական նախադպրոցական կազմակերպություններ	տեղ			
	ընդամենը / 1000 մարդ				
	հանրակրթական դպրոցներ	տեղ			
	ընդամենը / 1000 մարդ				
	Հիվանդանոցներ	մահճակալ	367		367
	Պոլիկլինիկաներ	հատ	2		2
	Առևտրի	քառ. մ առևտր. մակերես			
	6. Տրանսպորտային սպասարկում				
	Համահամայնքային փողոցների երկարությունը՝ ընդամենը	կմ	27.64		35.70
	Փողոցաճանապարհային ցանցի խտություն /բնակավայրի սահմաններում	% բնակավայրի ընդհանուր մակերեսից	3.64		4.82
	7. Ինժեներական սարքավորումներ և բարեկարգում				
	Ընդհանուր ջրօգտագործում	խոր. մ / օր			
	- տնտեսական-խմելու նպատակով	խոր. մ / օր			
	- արտադրական կարիքների համար	խոր. մ / օր			

	Ջրամատակարարման համակարգի գլխամասային կառույցների հզորություն	խոր. մ / օր			
	Ջրամատակարարման օգտագործման աղբյուրներ	հազ. խոր. մ / օր	Միուբի ՕՋԿ-2 հատ 10000 խոր. մ սնվում է Կաթնաղբյուրի d=900մմ 2-րդ ջրատարից, Քանաքեռի ՕՋԿ-2 հատ 2500 խոր. մ սնվում է Միուբի ՕՋԿ-ից եկող d=600մմ ջրատարից, Զեյթունի ՕՋԿ-1 հատ հատ 2600 խոր. մ սնվում է Կաթնաղբյուրից եկող d=800մմ 3- րդ ջրատարից:		
	Մաքուր ջրօգտագործում	լ/վրկ			
	այդ թվում՝				
	տնտեսական-խմելու նպատակով	լ/վրկ			
	Կոյուղի	խոր. մ /օր			
	Կեղտաջրերի ընդհանուր ելքը՝ ընդամենը	հազ. խոր. մ /օր			
	այդ թվում՝				
	կենցաղային կոյուղի	խոր. մ /օր			
	արտադրական կոյուղի	խոր. մ /օր			
	Կոյուղու մաքրման կայանների արտադրողականություն	խոր. մ /օր	-		
	Էլեկտրամատակարարում				
	Էլեկտրաէներգիայի գումարային օգտագործում	կՎտ.ժամ/տարի			
	այդ թվում՝				
	արտադրական օբյեկտների կարիքների համար	կՎտ.ժամ/տարի			
	կոմունալ-կենցաղային կարիքների համար	կՎտ.ժամ/տարի			
	1 մարդու կողմից տարեկան էլեկտրաէներգիայի օգտագործում	կՎտ. ժամ			
	այդ թվում՝				
	կոմունալ-կենցաղային կարիքների համար	կՎտ.ժամ	429.03		429.03
	Գազի օգտագործումը՝ ընդամենը	հազ. խոր. մ	-		-
	այդ թվում՝				
	կոմունալ-կենցաղային կարիքների համար	հազ. խոր. մ	-		-
	արտադրական կարիքների համար	մլն խոր. մ	-		-
	8. Տարածքի ինժեներական նախապատրաստում				
	Տարածքի պաշտպանությունը ջրածածկումից				

	Մակերեսը	հա	-		-
	պաշտպանիչ կառույցների երկարությունը	կմ			
	Գետափերի ամրացում	կմ			
	Տարածքի սանիտարական մաքրում	հա			
	Կենցաղային աղբի կուտակման չափը (նորմ.՝ 190կգ/մարդ/տարի)	տ/տարի			
	9. Շրջակա միջավայրի պահպանություն				
	Աղտոտվածության աղբյուրներից, աղմուկի ներգործությունից պաշտպանող սանիտարապաշտպանիչ գոտիներ՝ ընդամենը	հա	-		-
	այդ թվում՝				
	Կանաչապատում	հա	38.1		69.0
	Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը	% սահմանային թույլատրելի խտությունից ՍԹԽ			
	Գետերի և ստորերկրյա ջրերի ջրամբարների (արհեստական և բնական) աղտոտվածութ. մակարդակը	% սահմանային թույլատրելի խտությունից ՍԹԽ			
	Հողի և ընդերքի աղտոտվածության մակարդակը	% սահմանային թույլ. Խտութ. ՍԹԽ			
	Աղմուկի ազդեցության մակարդակը	Դեցիբել /ԴՑԲ/	-		-

Աղյուսակ 2

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)
1	2	3	4	5
	Բնակավայրերի հողերից			
ԲԲ			Բնակավայրերի	
ԲԲ.10	*Սակավահարկ բնակ.*	*3.09*	*Խառը կառուցապատման*	*3.09*
ԲԲ.11	*Սակավահարկ բնակ.*	*0.55*	*Խառը կառուցապատման*	*0.55*
ԲԲ.12	*Սակավահարկ բնակ.*	*1.03*	*Խառը կառուցապատման*	*1.03*
ԲԲ.13	*Սակավահարկ բնակ.*	*0.70*	*Խառը կառուցապատման*	*0.70*

ԲԲ.14	Սակավահարկ բնակ.	1.90	Խառը կառուցապատման	1.90
ԲԲ.15	Սակավահարկ բնակ.	1.03	Խառը կառուցապատման	1.03
ԲԲ.16	Սակավահարկ բնակ.	1.88	Խառը կառուցապատման	1.88
ԲԲ.17	Սակավահարկ բնակ.	4.06	Խառը կառուցապատման	4.06
ԲԲ.19	Սակավահարկ բնակ.	1.70	Խառը կառուցապատման	1.70
ԲԲ.21	Սակավահարկ բնակ.	1.23	Խառը կառուցապատման	1.23
ԲԲ.25	Սակավահարկ բնակ.	1.72	Խառը կառուցապատման	1.72
ԲԲ.26	Սակավահարկ բնակ.	1.76	Խառը կառուցապատման	1.76
ԲԲ.33	Սակավահարկ բնակ.	1.33	Խառը կառուցապատման	1.33
ԲԲ.38	Սակավահարկ բնակ.	1.71	Խառը կառուցապատման	1.71
ԲԲ.43	Սակավահարկ բնակ.	1.30	Խառը կառուցապատման	1.30
ԲԲ.44	Սակավահարկ բնակ.	1.12	Խառը կառուցապատման	1.12
ԲԲ.44.1	Սակավահարկ բնակ.(գ.)	6.95	Ընդհ. օգտագործման (փողոց)	6.95
ԲԲ.45	Սակավահարկ բնակ.	0.34	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.34
ԲԲ.46	Սակավահարկ բնակ.	0.47	Հասարակ.նշանակ. կանաչապատում	0.47
ԲԲ.50	Խառը կառուցապատման	2.70	Սակավահարկ բնակ	2.70
ԲԲ.51	Խառը կառուցապատման	2.22	Սակավահարկ բնակ	2.22
ԲԲ.52	Խառը կառուցապատման	3.08	Սակավահարկ բնակ	3.08
ԲԲ.53	Խառը կառուցապատման	2.59	Սակավահարկ բնակ	2.59
ԲԲ.57.1	Հասարակական (գ.)	5.40	Ընդհ. օգտագործման (փողոց)	5.40
ԲԲ.58.1	Հասարակական	0.11	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.11
ԲԲ.60.1	Բազմաբնակարան	0.04	Խառը կառուցապատման	0.04
ԲԲ.61	Բազմաբնակարան	0.34	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.34
ԲԲ.62	Բազմաբնակարան	0.26	Հասարակ. նշանակ. կանաչապատում	0.26
ԲԲ.62.1	Բազմաբնակարան (գ.)	8.50	Ընդհ. օգտագործման (փողոց)	8.50
ԲԲ.65	Խառը կառուցապատման	0.90	Բազմաբնակարան	0.90
ԲԲ.66	Խառը կառուցապատման	0.96	Բազմաբնակարան	0.96
ԲԲ.67	Խառը կառուցապատման	1.94	Բազմաբնակարան	1.94
ԲԲ.68	Խառը կառուցապատման	0.07	Բազմաբնակարան	0.07
ԲԲ.71	Բնակ. այլ	2.00	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	2.00
ԲԲ.72	Բնակ. այլ	0.33	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.33
ԲԲ.73	Բնակ. այլ	0.39	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.39
ԲԲ.74	Բնակ. այլ	1.11	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	1.11
ԲԲ.75	Բնակ. այլ	0.08	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.08
ԲԲ.76	Բնակ. այլ	1.52	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	1.52
ԲԲ.77	Բնակ. այլ	1.35	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	1.35
ԲԲ.78	Բնակ. այլ	0.20	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.20
ԲԲ.79	Բնակ. այլ	0.37	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.37
ԲԲ.80	Բնակ. այլ	2.05	Հասարակ. Նշանակ.	2.05

			կանաչապատում	
ԲԲ.80.1	*Բնակ. այլ*	*0.23*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.23*
ԲԲ.82	*Բնակ. այլ*	*3.03*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*3.03*
ԲԲ.83	*Բնակ. այլ*	*0.10*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.10*
ԲԲ.84	*Բնակ. այլ*	*2.05*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*2.05*
ԲԲ.85	*Բնակ. այլ*	*0.26*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.26*
ԲԲ.94	*Բնակ. այլ*	*6.02*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*6.02*
ԲԲ.94.1	*Սակավահարկ բնակ.*	*3.68*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*3.68*
ԲԲ.95	*Բնակ. այլ*	*0.14*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.14*
ԲԲ.96	*Բնակ. այլ*	*0.11*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.11*
ԲԲ.96.1	*Բնակ. այլ*	*0.02*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.02*
ԲԲ.97	*Բնակ. այլ*	*0.23*	*Ընդհ. օգտագործման (փողոց)*	*0.23*
ԲԲ.98	*Բնակ. այլ*	*0.37*	*Ընդհ. օգտագործման (փողոց)*	*0.37*
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից			
ԱԲ			**Բնակավայրերի**	
ԱԲ.1	*Արդյունաբերության*	*0.14*	*բազմաբնակարան*	*0.14*
ԱԲ.2	*Արդյունաբերության*	*0.20*	*բազմաբնակարան*	*0.20*
ԱԲ.9	*Արդյունաբերության*	*7.51*	*Խառը կառուցապատման*	*7.51*
ԱԲ.11	*Արդյունաբերության*	*0.46*	*Խառը կառուցապատման*	*0.46*
ԱԲ.12	*Արդյունաբերության*	*0.52*	*Խառը կառուցապատման*	*0.52*
ԱԲ.13	*Արդյունաբերության*	*0.13*	*Խառը կառուցապատման*	*0.13*
ԱԲ.14	*Արդյունաբերության*	*1.30*	*Խառը կառուցապատման*	*1.30*
ԱԲ.15	*Արդյունաբերության*	*3.61*	*Խառը կառուցապատման*	*3.61*
ԱԲ.16	*Արդյունաբերության*	*0.48*	*Ընդհ. օգտագործման (փողոց)*	*0.48*
	Հատուկ պահպանվող տարածքների			
ՀպԿ			**Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների**	
ՀպԿ.1	*Հատուկ պահպանվող տարածքների*	*18.74*	*Գերեզմանոց (գ. /ու.)*	*18.74*
ՀպԿ.1	*Հատուկ պահպանվող տարածքների*	*6.76*	*Գերեզմանոց (գ. /ու.)*	*6.76*

Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)

1	2	3	4	5
	Բնակավայրերի հողերից			
ԲԲ			Բնակավայրերի	
ԲԲ.1	Սակավահարկ բնակ.	1.86	Խառը կառուցապատման	1.86
ԲԲ.2	Սակավահարկ բնակ.	2.12	Խառը կառուցապատման	2.12
ԲԲ.3	Սակավահարկ բնակ.	1.93	Խառը կառուցապատման	1.93
ԲԲ.4	Սակավահարկ բնակ.	1.15	Խառը կառուցապատման	1.15
ԲԲ.5	Սակավահարկ բնակ.	0.37	Խառը կառուցապատման	0.37
ԲԲ.6	Սակավահարկ բնակ.	1.23	Խառը կառուցապատման	1.23
ԲԲ.7	Սակավահարկ բնակ.	0.33	Խառը կառուցապատման	0.33
ԲԲ.8	Սակավահարկ բնակ.	0.27	Խառը կառուցապատման	0.27
ԲԲ.9	Սակավահարկ բնակ.	2.54	Խառը կառուցապատման	2.54
ԲԲ.18	Սակավահարկ բնակ.	3.11	Խառը կառուցապատման	3.11
ԲԲ.20	Սակավահարկ բնակ.	2.01	Խառը կառուցապատման	2.01
ԲԲ.22	Սակավահարկ բնակ.	0.63	Խառը կառուցապատման	0.63
ԲԲ.23	Սակավահարկ բնակ.	0.96	Խառը կառուցապատման	0.96
ԲԲ.24	Սակավահարկ բնակ.	1.53	Խառը կառուցապատման	1.53
ԲԲ.27	Սակավահարկ բնակ.	1.23	Խառը կառուցապատման	1.23
ԲԲ.28	Սակավահարկ բնակ.	0.72	Խառը կառուցապատման	0.72
ԲԲ.29	Սակավահարկ բնակ.	0.85	Խառը կառուցապատման	0.85
ԲԲ.30	Սակավահարկ բնակ.	1.86	Խառը կառուցապատման	1.86
ԲԲ.31	Սակավահարկ բնակ.	0.68	Խառը կառուցապատման	0.68
ԲԲ.32	Սակավահարկ բնակ.	0.38	Խառը կառուցապատման	0.38
ԲԲ.34	Սակավահարկ բնակ.	0.78	Խառը կառուցապատման	0.78
ԲԲ.35	Սակավահարկ բնակ.	1.39	Խառը կառուցապատման	1.39
ԲԲ.36	Սակավահարկ բնակ.	0.35	Խառը կառուցապատման	0.35
ԲԲ.37	Սակավահարկ բնակ.	2.21	Խառը կառուցապատման	2.21
ԲԲ.40	Սակավահարկ բնակ.	0.99	Խառը կառուցապատման	0.99
ԲԲ.41	Սակավահարկ բնակ.	0.34	Խառը կառուցապատման	0.34
ԲԲ.42	Սակավահարկ բնակ.	0.33	Խառը կառուցապատման	0.33
ԲԲ.47	Սակավահարկ բնակ.	0.43	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.43
ԲԲ.48	Սակավահարկ բնակ.	0.16	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.16
ԲԲ.49	Սակավահարկ բնակ.	0.20	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.20
ԲԲ.54	Հասարակական	1.38	Խառը կառուցապատման	1.38
ԲԲ.55	Հասարակական	0.08	Խառը կառուցապատման	0.08
ԲԲ.56	Հասարակական	0.11	Խառը կառուցապատման	0.11
ԲԲ.57	Հասարակական	0.09	Խառը կառուցապատման	0.09
ԲԲ.58	Հասարակական	0.69	Խառը կառուցապատման	0.69
ԲԲ.59	Բազմաբնակարան	0.08	Խառը կառուցապատման	0.08
ԲԲ.60	Բազմաբնակարան	0.32	Խառը կառուցապատման	0.32
ԲԲ.63	Սակավահարկ բնակ.	2.01	Խառը կառուցապատման	2.01
ԲԲ.64	Սակավահարկ բնակ.	5.26	Խառը կառուցապատման	5.26
ԲԲ.69	Բնակ. այլ	6.34	Խառը կառուցապատման	6.34
ԲԲ.70	Բնակ. այլ	0.76	Խառը կառուցապատման	0.76
ԲԲ.81	Բնակ. այլ	0.14	Հասարակ. Նշանակ. կանաչապատում	0.14
ԲԲ.86	Բնակ. այլ	0.16	Հասարակ. Նշանակ.	0.16

			կանաչապատում	
ԲԲ.87	*Բնակ. այլ*	*0.20*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.20*
ԲԲ.88	*Բնակ. այլ*	*0.23*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.23*
ԲԲ.89	*Բնակ. այլ*	*0.15*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.15*
ԲԲ.90	*Բնակ. այլ*	*0.04*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.04*
ԲԲ.91	*Բնակ. այլ*	*0.06*	*Ընդհ. օգտագործման (փողոց)*	*0.06*
ԲԲ.92	*Բնակ. այլ*	*0.22*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.22*
ԲԲ.93	*Բնակ. այլ*	*0.39*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*0.39*
ԲԲ.99	*Խառը կառուցապատման*	*2.10*	*Հասարակ. Նշանակ. կանաչապատում*	*2.10*
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից			
ԱԲ			**Բնակավայրերի**	
ԱԲ.3	*Արդյունաբերության*	*1.28*	*Խառը կառուցապատման*	*1.28*
ԱԲ.5	*Արդյունաբերության*	*0.20*	*Խառը կառուցապատման*	*0.20*
ԱԲ.6	*Արդյունաբերության*	*0.66*	*Խառը կառուցապատման*	*0.66*
ԱԲ.7	*Արդյունաբերության*	*0.71*	*Խառը կառուցապատման*	*0.71*
ԱԲ.8	*Արդյունաբերության*	*1.12*	*Խառը կառուցապատման*	*1.12*
ԱԲ.10	*Արդյունաբերության*	*1.36*	*Խառը կառուցապատման*	*1.36*
	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների			
ԿԲ			**Բնակավայրերի**	
ԿԲ.1	*տրանսպորտի*	*0.59*	*Խառը կառուցապատման*	*0.59*
ԿԲ.2	*տրանսպորտի*	*1.46*	*Ընդհ. օգտագործման (փողոց)*	*1.46*
ԿԲ.3	*տրանսպորտի*	*0.26*	*Ընդհ. օգտագործման (փողոց)*	*0.26*
ԿԲ.4	*տրանսպորտի*	*0.25*	*Ընդհ. օգտագործման (փողոց)*	*0.25*
ԿԲ.5	*տրանսպորտի*	*0.14*	*Ընդհ. օգտագործման (փողոց)*	*0.14*

Երկարաժամկետ միջոցառումներ (10-15 տարի)

Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	մակերեսը (հա)
1	2	3	4	5
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից			

ԱԲ			Բնակավայրերի	
ԱԲ.4	*Արդյունաբերության*	*1.40*	*Խառը կառուցապատման*	*1.40*




ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԱԳԻՐ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԱՐԱԲԿԻՐ Վ.2.
ԱՎԱՆ Վ.2.
ԱՎԱՆ Վ.2.
ՆՈՐ ՆՈՐՔ Վ.2.
ԱՐԱԲԿԻՐ Վ.2.
ՆՈՐ ՆՈՐՔ Վ.2.
ԿԵՆՏՐՈՆ Վ.2.
ԿԵՆՏՐՈՆ Վ.2.
0
0.5 կմ
1.0 կմ
Մ 1:5 000

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԷՍՔԻԶ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԱՎԱՆ
Վ.2.
ԱՐԱԲԿԻՐ
Վ.2.
ԱՎԱՆ
Վ.2.
ՆՈՐ ՆՈՐՔ
Վ.2.
ԱՐԱԲԿԻՐ
Վ.2.
ՆՈՐ ՆՈՐՔ
Վ.2.
ԿԵՆՏՐՈՆ
Վ.2.
ԿԵՆՏՐՈՆ
Վ.2.


ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԱՎԱՆ
Վ.2.
ԱՐԱԲԿԻՐ
Վ.2.
ՆՈՐ ՆՈՐՔ
Վ.2.
ԿԵՆՏՐՈՆ
Վ.2.
0
0.5կմ
1.0կմ
U 1:5 000


ԵՐԵՎԱՆԻ ՋԱՆԱՋԵՌ-ՋԵՑԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐ
ԱՐԱԲԿԻՐ
Վ.2.
ԱՎԱՆ
Վ.2.
ԱՎԱՆ
Վ.2.
ՆՈՐ ՆՈՐՔ
Վ.2.
ԱՐԱԲԿԻՐ
Վ.2.
ՆՈՐ ՆՈՐՔ
Վ.2.
ԿԵՆՏՐՈՆ
Վ.2.
ԿԵՆՏՐՈՆ
Վ.2.


ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ՝ 38.1 հա (5.0%)
ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ՝ 130.0 հա (17.0%)
ՆԱԽԱԳՇԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ՝ 30.9 հա (4.0%)
ՆԱԽԱԳՇԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԳՈՏԻ՝ 19.1 հա (2.5%)
ՓՈՂՈՑՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ
ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻ
ՍԱՆԻՏԱՐԱՊԱՇՏՊԱՆԻՉ ԳՈՏԻՆԵՐ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍԱՀՄԱՆԸ
ԱՐԱԲԿԻՐ Վ.Հ.
ԱՎԱՆ Վ.Հ.
ԱՎԱՆ Վ.Հ.
ՆՈՐ ՆՈՐՔ Վ.Հ.
ԱՐԱԲԿԻՐ Վ.Հ.
ՆՈՐ ՆՈՐՔ Վ.Հ.
ԿԵՆՏՐՈՆ Վ.Հ.
ԿԵՆՏՐՈՆ Վ.Հ.


ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ՏԱՐԱԾՔԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ
ԱՐԱԲԿԻՐ վ.
ԱՎԱՆ վ.
ԱՎԱՆ վ.
ԶԱՌ-ՆՈՐՔ վ.
ԱՐԱԲԿԻՐ վ.
ԿԵՆՏՐՈՆ վ.
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔԵՐԻ
ԳԵՐԵԶՄԱՆՈՑՆԵՐ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՍԱՀՄԱՆԸ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՀՊԱՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՏԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՏԻ
ՊԱՀՊԱՆՎԱՂ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏԿԱՆԻ ՀԱՄԱՐԸ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ ՀԱՄԱՐԸ
ՇԵՆՔԻ ՀԱՄԱՐԸ
ՊԵՏ.ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԱՄԱՐԸ
/ՏԵՂԱԿԱՆ ԿԱՄ ՊԱՇՏՊԱՐԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ/


ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԱՎԱՆ Վ.Հ.
ԱՐԱԲԿԻՐ Վ.Հ.
ԱՎԱՆ Վ.Հ.
ՆՈՐ ՆՈՐՔ Վ.Հ.
ԱՐԱԲԿԻՐ Վ.Հ.
ՆՈՐ ՆՈՐՔ Վ.Հ.
ԿԵՆՏՐՈՆ Վ.Հ.
ԿԵՆՏՐՈՆ Վ.Հ.
Մ 1:5 000

ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքի

<u>ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ</u>

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

1. Տարածքի դիրքը և նկարագրությունը
2. Բնակլիմայական պայմանները
3. Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնիկական պայմաններ
4. Հողօգտագործման արդի վիճակը
5. Ինժեներական պաշտպանական միջոցառումներ տարերային վտանգավոր երևույթներից
6. Պատմության և մշակույթի հուշարձաններ
7. Հատակագծատարածական կազմակերպում, գոտիավորման և կառուցապատման հայեցակարգ
8. Կանաչապատում
9. Ճանապարհային հաղորդակցուղիների ցանց և կարգավորող գծեր
10. Տարածքի ինժեներական ենթակառուցվածք
11. Շրջակա միջավայրի պահպանություն

Բ. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Գ. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԶԵՎԵՐ

Դ. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԶԵՎԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Ե. ԳՈՏԻՆԵՐ ԵՎ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ (ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ) ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

<u>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</u>

1. Որոշում N560-Ա Երևանի Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին (5 թերթ) .
2. Հողերի օգտագործման հաշվեկշիռներ (գոյություն ունեցող, հեռանկարային)
3. Ելակետային տվյալներ (7 թերթ)
4. Քաղաքաշինական փորձաքննություն
5. Բնապահպանական փորձաքննություն
6. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բնակֆոնդի ցուցանիշներ
7. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի դիրքը Երևան քաղաքում
8. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ.Հենակետային հատակագիծ
9. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ.Հողատարածքների վերլուծական ուրվագիծ
10. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ.Քաղաքաշինական սահմանափակումների ուրվագիծ
11. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ.Հողօգտագործման ուրվագիծ
12. Տարածքի փաստացի օգտագործման հատակագիծ.Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանական գոտիների և տարածքի կանաչապատման
13. ՝Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Հատակագծային սահմանափակումներ՝ ուրվագիծ
14. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ.Տարածքի ճարտարագիտա-երկրաբանական շրջանացման քարտեզ

15. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ.Բնական, բնական-տեխնածին վտանգավոր երևույթների ուրվագիծ
16. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ.Ստորերկրյա ջրերի խորության ուրվագիծ
17. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ.Սպասվող հորիզոնական առավելագույն արգացումների և խզումային խախտումների ուրվագիծ
18. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների տեղակայման ուրվագիծ
19. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Արդյունաբերական , հատուկ նշանակության և կոմունալ ենթակառուցվածքի օբյեկտների տեղակայման վերլուծության ուրվագիծ
20. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Կառուցապատման վերլուծություն ըստ հարկայնության
21. Տարածքի համալիր գնահատման հատակագիծ. Կառուցապատման վերլուծություն ըստ գործառնական նշանակության
22. ուրվագիծ
23. Գոտևորման նախագիծ.Հիմնական գծագիր
24. Գոտիավորման նախագիծ. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններ
25. Գոտևորման նախագիծ.Կարմիր գծեր
26. Գոտևորման նախագիծ.Կառուցապատման էսքիզ
27. Գոտևորման նախագիծ. Ճանապարհափողոցային ցանցի դասակարգում
28. Գոտևորման նախագիծ. Կանաչապատման ուրվագիծ
29. Գոտևորման նախագիծ. Շրջակա միջավայրի կանխատեսվող վիճակի ուրվագիծ
30. Գոտևորման նախագիծ. Շինարարության հերթականության ուրվագիծ
31. Գոտևորման նախագիծ. Ինժեներական ենթակառուցվածքներ. Էլեկտրամատակարարման ուրվագիծ
32. Գոտևորման նախագիծ. Ինժեներական ենթակառուցվածքներ. Էլեկտրամատակարարման ուրվագիծ.10կՎ ենթակայանների տեղաբաշխում և մալուխային ցանց
33. Գոտևորման նախագիծ. Ինժեներական ենթակառուցվածքներ. Գազամատակարարման ուրվագիծ
34. Գոտևորման նախագիծ. Ինժեներական ենթակառուցվածքներ. Ջրամատակարարում, կենցաղային կոյուղի, ոռոգում, հեղեղատար կոյուղի